

Ներդիր-թերթիկ՝ տեղեկատվություն հիվանդի համար
ԼԻՈՏՈՆ® 1000 ՄՄ/գ գել
Հեպարինի նատրիումական աղ

Սույն դեղամիջոցը կիրառելուց առաջ ուշադիր ընթերցեք ամբողջ ներդիր-թերթիկը, քանի որ այն պարունակում է Ձեզ համար կարևոր տեղեկատվություն:

Սույն դեղամիջոցը միշտ անհրաժեշտ է կիրառել տվյալ ներդիր-թերթիկում շարադրված կամ բուժող բժշկի կամ դեղատան աշխատակցի ցուցումներին խիստ համապատասխան:

- Պահպանեք ներդիր-թերթիկը: Հնարավոր է անհրաժեշտություն առաջանա այն նորից ընթերցել:
- Եթե Դուք ունեք հարցեր կամ Ձեզ անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկատվություն, դիմեք դեղատան աշխատակցին:
- Որևէ կողմնակի ազդեցության առաջացման դեպքում դիմեք բժշկի կամ դեղատան աշխատակցի: Դա վերաբերում է ցանկացած հնարավոր կողմնակի ազդեցության, այդ թվում նրանց, որոնք սույն ներդիր-թերթիկում նկարագրված չեն: Տե՛ս բաժին 4:
- Եթե 7 օր հետո հիվանդության ախտանիշերը խորացել են կամ լավացում չի դիտվում, դիմեք բժշկի:

Սույն ներդիր-թերթիկի բովանդակությունը՝

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում ԼԻՈՏՈՆ® 1000 ՄՄ/գ գելը և ինչի՞ համար է այն օգտագործվում:

2. Ի՞նչ է պետք իմանալ ԼԻՈՏՈՆ® 1000 ՄՄ/գ գելը կիրառելուց առաջ:

3. Ինչպե՞ս կիրառել ԼԻՈՏՈՆ® 1000 ՄՄ/գ գելը:

4. Հնարավոր կողմնակի ազդեցություններ:

5. Ինչպե՞ս պահպանել ԼԻՈՏՈՆ® 1000 ՄՄ/գ գելը:

6. Փաթեթի պարունակությունն ու այլ տեղեկատվություն:

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում ԼԻՈՏՈՆ® 1000 ՄՄ/գ գելը և ինչի՞ համար է այն օգտագործվում:

ԼԻՈՏՈՆ® 1000 ՄՄ/գ գել դեղամիջոցի ազդող նյութը հեպարինն է (հեպարինի նատրիումական աղը): Լիոտոնը արտադրվում է գելի տեսքով, որը նախատեսված է մաշկին քսելու համար: Ախտահարված հատվածներին քսելիս հեպարինը կանխարգելում է մակերեսային երակներում թրոմբների առաջացումը, լավացնում է տեղային միկրոշրջանառությունը(արյան շրջանառությունը փոքր անոթներում) և նվազեցնում է այտուցվածությունը:

ԼԻՈՏՈՆ® 1000 ՄՄ/գ գելն օգտագործվում է

- մակերեսային երակների հիվանդությունների ախտանիշային բուժման համար (ինչպիսիք են օրինակ՝ այն հիվանդությունները, որոնց համար բնորոշ է երակների վարիկոզ լայնացումը և դրանց բարդությունները, ախտահարված երակներում թրոմբների առաջացումը՝ երակների պատերի բորբոքումով կամ առանց դրա, երակները շրջապատող

հյուսվածքների բորբոքում, ինչպես նաև երակների վարիկոզ լայնացման շրջանում մաշկի վրա առաջացող խոցերը),

- վիրահատական միջամտությունների հետևանքով երակի պատի բորբոքման բուժման ժամանակ,
- վիրահատական միջամտություններից հետո առաջացած երևույթների արտահայտվածության (օրինակ կապտուկների ու այտուցների) նվազեցման համար,
- հոդերի ու մկանների շրջանում՝ դրանց վնասվածքների ու ձգումների հետևանքով առաջացած այտուցների ու կապտուկների վերացման համար:

ԼԻՈՏՈՆ® 1000 ՄՄ/գ գելը ցուցումների առկայության դեպքում կարելի է օգտագործել առանձին՝ տեղային բուժման համար կամ զուգակցմամբ՝ համակարգային թերապիայի շրջանակներում :

2. Ի՞նչ է անհրաժեշտ իմանալ ԼԻՈՏՈՆ® 1000 ՄՄ/գ գել դեղամիջոցը կիրառելուց առաջ

Մի՛ օգտագործեք ԼԻՈՏՈՆ® 1000 ՄՄ/գ գելը հետևյալ դեպքերում՝

Եթե ունեք ալերգիա հեպարինի նատրիումական աղի կամ տվյալ դեղամիջոցի ցանկացած այլ բաղադրիչի նկատմամբ (թվարկված են բաժին 6-ում):

Նախազգուշացումներ և նախազգուշական միջոցներ

ԼԻՈՏՈՆ® 1000 ՄՄ/գ գել դեղամիջոցն օգտագործելուց առաջ դիմեք բժշկին կամ դեղագետին խորհրդատվության համար:

Եթե ունեք արյունահոսությունների բարձր հակվածություն: Այդ դեպքում Ձեր բժշկին անհրաժեշտ է մանրագնին կշռադատել ԼԻՈՏՈՆ® 1000 ՄՄ/գ գելի կիրառման հնարավորությունը:

Եթե ԼԻՈՏՈՆ® 1000 ՄՄ/գ գել դեղամիջոցն օգտագործելուց հետո հայտնվում են ալերգիայի նշաններ (գերզգայունություն): Այդ դեպքում ԼԻՈՏՈՆ® 1000 ՄՄ/գ գելի օգտագործումը պետք է միանգամից դադարեցվի:

Եթե այն տեղում, ուր պետք է քսվի դեղամիջոցը Դուք ունեք բաց վերքեր, մաշկային արյունահոսություն կամ մաշկային վարակ՝ ԼԻՈՏՈՆ® 1000 ՄՄ/գ գելն այդպիսի հատվածներին քսել չի կարելի: ԼԻՈՏՈՆ® 1000 ՄՄ/գ գելը նաև չի կարելի քսել մաշկով չճածկված հատվածներին (օրինակ սեռական օրգաններին, բերանին):

Երեխաներ ու դեռահասներ՝

ԼԻՈՏՈՆ® 1000 ՄՄ/գ գելը չպետք է օգտագործվի երեխաների ու դեռահասների կողմից, քանի որ դեղամիջոցի անվտանգությունն ու արդյունավետությունն այս տարիքային խմբում հաստատված չէ:

Այլ դեղամիջոցներ և ԼԻՈՏՈՆ® 1000 ՄՄ/գ գելը

Եթե Դուք ներկայումս ընդունում եք, ոչ վաղ անցյալում ընդունել եք կամ կարող էիք ընդունած լինել ցանկացած այլ դեղամիջոցներ, հայտնեք բժշկին կամ դեղատան աշխատակցին:

Հատուկ զգուշություն ցուցաբերեք, եթե Դուք ընդունում եք պերօրալ հակակոագուլյանտներ (այսինքն թրոմբոլիտիկ առաջացումը կանխարգելող դեղեր): Այդ

դեպքում հեպարիտի մաշկին քսելը կարող է նպաստել արյան մակարդելիության ժամանակահատվածի երկարացմանը:

Վարարտադրողական ֆունկցիա, հղիություն և կրծքով կերակրման ժամանակաշրջան

ԼԻՏՏՈՆ® 1000 ՄՄ/գ գել դեղամիջոցը հղիության և կրծքով կերակրման ժամանակահատվածում ընդունելու մասին տվյալներ չկան:

Հղիության կամ կրծքով կերակրելու դեպքում, ինչպես նաև հնարավոր կամ պլանավորվող հղիության դեպքում տվյալ դեղամիջոցն օգտագործելուց առաջ խորհրդակցեք բժշկի կամ դեղատան աշխատակցի հետ:

Ազդեցություն տրանսպորտային միջոցների կառավարման և մեխանիզմների սպասարկման ունակության վրա

ԼԻՏՏՈՆ® 1000 ՄՄ/գ գելը չի ազդում տրանսպորտային միջոցների կառավարման և մեխանիզմների սպասարկման ունակության վրա:

ԼԻՏՏՈՆ® 1000 ՄՄ/գ գելը պարունակում է մեթիլպարահիդրոքսիբենզոատ (E218), պրոպիլպարահիդրոքսիբենզոատ (E216), ներոլիի յուղ և լավանդինային յուղ, որոնք կարող են առաջացնել ալերգիկ ռեակցիաներ հնարավոր է դանդաղեցված տիպի:

Այս դեղամիջոցը պարունակում է բուրավետիչներ, որոնց բաղադրության մեջ մտնում են ցիտրալ, ցիտրոնեյոլ, կումարին, D-լիմոնեն, ֆարնեզոլ, գերանեոլ և լինալոոլ: Ցիտրալը, ցիտրոնեյոլը, կումարինը D-լիմոնենը, ֆարնեզոլը, գերանեոլը և լինալոոլը կարող են առաջացնել ալերգիկ ռեակցիաներ:

3. Ինչպե՞ս կիրառել ԼԻՏՏՈՆ® 1000 ՄՄ/գ գելը

Միշտ կիրառեք տվյալ դեղամիջոցը սույն ներդիր-թերթիկում շարադրված հրահանգներին, կամ բուժող բժշկի կամ դեղատան աշխատակցի ցուցումներին համապատասխան: Եթե Դուք ինչ-որ բանում համոզված չեք, ապա դիմեք բժշկի կամ դեղատան աշխատակցի:

Դեղաչափում և կիրառման եղանակը

ԼԻՏՏՈՆ® 1000 ՄՄ/գ գելը նախատեսված է չվնասված մաշկի վրա օգտագործելու համար: Քսել գելը (պարկուճից դուրս մղել գելի 3-10 սմ երկարությամբ շերտ) ախտահարված հատվածին օրական մեկից երեք անգամ և ներմերսել: Եթե 7 օր հետո լավացում չեք նկատում կամ հիվանդության ախտանիշերը խորացել են, դիմեք բժշկի:

Եթե Դուք կիրառել եք ավելի ԼԻՏՏՈՆ® 1000 ՄՄ/գ գել, քան անհրաժեշտ է

ԼԻՏՏՈՆ® 1000 ՄՄ/գ գելի գերդոզավորման դեպքերի մասին տվյալներ չկան:

Գերդեզավորման դեպքում հեպարիտի ազդեցությունը հնարավոր է չեզոքացնել պրոտամին սուլֆատով:

Եթե մոռացել եք քսել ԼԻՏՏՈՆ® 1000 ՄՄ/գ գել դեղամիջոցը

Քսեք հենց կհիշեք դրա մասին: Մի՛ օգտագործեք կրկնակի չափաբաժինը բաց թողնվածը կոմպենսացնելու համար:

Եթե ունեք որևէ հարցեր տվյալ դեղամիջոցի վերաբերյալ խորհրդակցեք բուժող բժշկի կամ դեղատան աշխատակցի հետ:

4. Հնարավոր կողմնակի ազդեցություններ

Ինչպես և բոլոր դեղամիջոցները, ԼԻՏՏՈՆ® 1000 ՄՄ/գ գելը նույնպես կարող է առաջացնել կողմնակի ազդեցություն, չնայած որ ոչ բոլորի մոտ:

Մաշկին քսելուց հետո հեպարինի նկատմամբ ակերզիկ ռեակցիաները դիտվում են շատ հազվադեպ (շատ հազվադեպ նշանակում է, որ դրանք հանդիպում են ավելի հազվադեպ, քան 10000 հիվանդներից 1-ի մոտ):

Եզակի դեպքերում (հաճախականությունը հայտնի չէ, ըստ գոյություն ունեցող տվյալների չի կարող գնահատվել) կարող են առաջանալ գերզգայունության ռեակցիաներ, ինչպիսիք են մաշկի կարմրությունն ու քորը: Այդ ռեակցիաները, սովորաբար, վերանում են դեղամիջոցի կիրառումը դադարեցնելուց քիչ անց:

Հաղորդումներ կողմնակի ազդեցության մասին

Որևէ կողմնակի ազդեցության առաջացման դեպքում հայտնեք դրա մասին ձեր բժշկին կամ դեղատան աշխատակցին: Դա վերաբերում է ցանկացած հնարավոր կողմնակի ազդեցությանը, այդ թվում նաև նրանց, որոնք նկարագրված չեն սույն ներդիր-թերթիկում:

Հայտնելով կողմնակի ազդեցության մասին, Դուք կարող եք օգնել ավելի շատ տեղեկություններ հավաքել տվյալ դեղամիջոցի անվտանգության մասին:

5. Ինչպե՞ս պահպանել ԼԻՏՏՈՆ® 1000 ՄՄ/գ գելը

Պահպանել երեխաներից հեռու տեղում:

Պահպանել 25°C-ից ցածր պայմաններում :

Մի՛ օգտագործեք տվյալ դեղամիջոցը ստվարաթղթե տուփի և պարկուճի վրա նշված պիտանիության ժամկետը լրանալուց հետո: Պիտանիության ժամկետը վերաբերում է նշված ամսվա վերջին օրվան:

ԼԻՏՏՈՆ® 1000 ՄՄ/գ գելի փաթեթն առաջին անգամ բացելուց հետո կարելի է օգտագործել 6 ամսվա ընթացքում:

Ոչ մի դեղամիջոց մի՛ թափեք կոյուղու կամ կենցաղային աղբի մեջ: Ձեզ չպետքական դեղամիջոցի օգտահանման վերաբերյալ խորհրդակցեք դեղատան աշխատակցի հետ: Այդ միջոցառումները նպաստում են շրջակա միջավայրի պաշտպանությանը:

6. Փաթեթի պարունակությունն ու այլ տեղեկատվություն

Ի՞նչ է պարունակվում ԼԻՏՏՈՆ® 1000 ՄՄ/գ գել դեղամիջոցում

Ազդող նյութը հեպարինի նատրիումական աղն է՝ 1000 ՄՄ (միջազգային միավոր) 1 գ գելի հաշվարկով:

Այլ բաղադրիչներ՝ Էթանոլ, կարբոմեր, տրոլամին, մեթիլպարահիդրոքսիբենզոատ, պրոպիլպարահիդրոքսիբենզոատ, ցիտրուսային ծաղիկների յուղ (ներոլի յուղ, որում պարունակվում է լինալոլ, D-լիմոնեն, գերանեոլ, ցիտրալ, ցիտրոնելլոլ և ֆարնեոլ), լավանդինային յուղ (որում պարունակվում է լինալոլ, D-լիմոնեն, գերանեոլ և կումարին), թորած ջուր:

ԼԻՈՏՈՆ® 1000 ՄՄ/գ գել դեղամիջոցի արտաքին տեսքը և փաթեթի պարունակությունը՝

ԼԻՈՏՈՆ® 1000 ՄՄ/գ գելը մաշկին քսելու համար է:

ԼԻՈՏՈՆ® 1000 ՄՄ/գ գելն իրենից ներկայացնում է համարյա թափանցիկ, անգույն կամ թեթևակի դեղին , մածուցիկ կոնսիստենցիայի, բուրավետ գել:

Դեղամիջոցն արտադրվում է 30 գ, 50 գ, 100 գ պարկուճներով:

Վաճառքում կարող են լինել փաթեթավորման ոչ բոլոր չափերը:

Գրանցման հավաստագրի իրավատեր՝

Ա. Մենարինի Ինդուստրիե Ֆարմաչեուտիկե Ռիունիտե ս. ռ. լ. (Մենարինի գրուպ), Վիա Սետտե Սանտի 3, 50131, Ֆլորենցիա, Իտալիա

Արտադրող՝

Ա. Մենարինի Մենյուֆեկչերինգ Լոջիստիկա Էնդ Սերվիսիզ ս. ռ. լ., Վիա Սետտե Սանտի 3, 50131, Ֆլորենցիա, Իտալիա

Լիազոր ներկայացուցիչ

Բեռլին-Քեմի ԱԳ (ՄԵՆԱՐԻՆԻ ԳՐՈՒՊՊ)

Գլինիկեր Վեգ 125

12489 Բեռլին, Գերմանիա

Ներդիր-թերթիկի վերջին խմբագրության ամսաթիվը՝ 09.2018: